ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2013-5-2-Ա

ք. Երևան 27.11.2013թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2013 թվականի նոյեմբերի 25-ի նիստում քննարկեց 2013 թվականի սեպտեմբերի 17-ին արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի կողմից ներկայացված՝ ՖԴ Մենեջմենթ, Ինք., Դելավերի նահանգ ընկերության (այսուհետ՝ բողոքարկող) «RED DOOR» (հայտ No20121117) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 2-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետի և ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ կարգ) 107-րդ կետի 1-րդ ենթակետի, համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և գրանցման է ներկայացված ապրանքների և (կամ) ծառայությունների համար, որոնք նույնատիպ են այն ապրանքներին և ծառայություններին որոնց համար գրանցված է ավելի վաղ ապրանքային նշանը: Տվյալ դեպքում հայտարկված «RED DOOR» բառային ապրանքային նշանը նույնական է 03-րդ դասի նույնատիպ ապրանքների համար միջազգային գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետությունում պահպանվող «RED DOOR» («ELIZABETH ARDEN INTERNATIONAL SARL 28 chemin de Joinville, P.O. Box 43 CH-1216 Cointrin-Geneva (CH) IR 574131) ապրանքային նշանին:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ բավարարելու, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանին իրավական պահպանություն տալու մասին, քանի որ

հակադրված IR574131 միջազգային գրանցմամբ պահպանվող ապրանքային նշանի նկատմամբ իրավունքները փոխանցվել են բողոքարկողին:

Բողոքարկողի ներկայացուցիչը և փորձաքննության բաժնի պետը նույնպես համաձայն էին կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Ամբողջությամբ բավարարել արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի կողմից ներկայացված՝ ՖԴ Մենեջմենթ, Ինք., Դելավերի նահանգ ընկերության «RED DOOR» ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչել և ապրանքային նշանին իրավական պահպանություն տալ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

Բողոքարկման խորհրդի նախագահ Գ. Մելքոնյան